Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
U-25

25

1904. № 3161.

ԱԶՐԱՅԻԼ

1904

(47.925)
Ա-25

գին. 5 կոպ.

С арт-к
3247
Э(47.925)
Ц-25

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ЯЗЫКОЗНАНИЯ
Академии Наук
СССР

ԱԶՐԱՅԻԼ

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Տպարան Յակովբ Դասապետեանցի
1904

- .01. 2013
12543
391.99
Ա-25
24 MAY 2005
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՍՍՌ Արտ.ՍՍՌ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
Ա. ՄՈՍԵՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ
3531-48

Մեծ Հայքի ընկնելուց յետոյ նրա մի ամբողջ գաւառ՝ Սիւնիքը չուզեց ենթարկուել օտարի լծին. արիւնով ու զէնքով պահպանեց նա իր անկախութիւնը Փոքր Կովկասի լեռներում, որ յետոյ կոչուեց և Ղարաբաղ։ Այս գաւառի բնակիչներն արծիւների նման ամրացան իրանց բարձրութիւններում և աննկուն կերպով պաշտպանում էին իրանց հայրենիքը, կրօնն ու լեզուն. սրանց ջանքովն էր, որ փոքրիկ Ղարաբաղն սկսեց փայլել իր պատաւ մօր՝ Հայաստանի վաղեմի փառքերով։ Նա ծաղկում էր ու զօրանում հաստատ մնալով իր անկախութեան մէջ. ու յուսալի էր, որ Ղարաբաղը, արդէն իբրև մի զօրեղ իշխանութիւն, չ'պիտի բաւականանար իր ժողովրդի հանգստութիւնով ու բաղդաւորութիւնով, այլ հաւաքելով իր բոլոր ուժերը, պիտի գնար վրէժխնդիր լինելու բարբարոս թշնամիներից իր անարգուած հայրենիքի, աւերուած տաճարների և եղբայրների կրած տառապանքների համար։

Բայց... բայց կայ մի առած. «Հայի տունը կամ ինքը հայը կ'քանդի, կամ սատանան էլ չի կարող քանդել»։ Ջուր չեն հայերն այս առածը հիւսել...

Ղարաբաղի իշխող մելիքների մէջ տարաձայնութիւններ ծագեցան, իւրաքանչիւր մելիք դադարեց թէ իր հպատակների, թէ Ղարաբաղի ամբողջութեան վրա հոգալուց. նա մտածում էր միայն որոգայթներ լարել իր ազգակից մելիքների դէմ։ Օգուտ քաղելով այս երկպառակութիւններից, հարևան թափառական թուրքերը յարձակուեցան դեռ մէկի, ապա միւսի վրա... Եւ մինչև անգամ այս դիպուածում չ'մոռացան թշնամի մելիքներն իրանց անձնական հաշիւները. նրանք չ'միացան, որ ընդհանուր ուժով դէմ գնեն թշնամուն, ինչպէս դէմ էին գնում մի ժամանակ միացած ու հարուածում շատ անգամ աւելի զօրեղ թշնամիներին։—

Ահա այստեղ հանգաւ Ղարաբաղի երջանիկ աստղը. թուրքերը լցրին իրանց հրոսակներով գիւղերն ու քաղաքները և արիւնով հեղեղեցին բազմաչարչար ու փառաւոր Արցախը...

Ա.

Սրևն արդէն մայր էր մտել. Երեկոյեան

Աստղն էլ մօտենում էր Ուչթէփէ բլրին. հովտի մէջ թիկն տուած մի քարի՝ նստած էր ծեր հովիւը. նա վաղուց փչում էր սրինգն ու ցրուած գառները կամաց-կամաց հաւաքւում էին նրա շուրջը։ Մնացած հովիւներից մէկը խուրջինից հաց, պանիր էր հանում, իսկ երրորդը գնացել էր մեծ պղնձով առուից ջուր բերելու։ Սրբնգի կկլոցն երբեմնապէս ընդհատում էր շների հաջոցը, որոնք կորած գառներին ճանապարհ էին ցոյց տալիս։ Այդ ժամանակ արևելքում կարծես երկինքը կրակուեց. ծագեց բոլորակ լուսինն ու շները կատաղի հաջոցով յանկարծակի դէպի մի կողմ արշաւեցին։ Հեռու հովտում երևաց մի ձիաւոր։

— Ադա Ջամալ, Գիւքի, տեսէք էն ով է, շները վնաս չ'տան, ասաց թիկն տուած հովիւը սրինգն ընդհատելով։

Ջամալն իսկոյն հետևեց շներին, նրանց զբսպել աշխատելով. Գիւքին նոյնպէս ճանապարհի մէջ տեղը թողեց պղինձն ու վազ տուեց այն կողմ։

— Է՛յ, ո՞վ ես, ո՞ւր ես գնում, կանչեց Ջամալը կանգնեցնելով ձիաւորին։

Ճանապարհորդը պատասխանեց, որ գնում է Հալիձոր ու խնդրեց, որ զսպեն շներին։

— Ախպէր ջան, գիշեր ժամանակ է, ասաց Գիւքին, Ղարաչօրլու թուրքերը կատաղել են,

դու մենակ ես ու հազար մի փորձանք կայ ճամբին. արի, էս գիշեր մեզ մօտ անցկացրու, մեր աղուհացը կեր, էգուց առաւօտ՝ Աստծու խերին քեզ ճամբա կ'գցենք։

Զիաւորը փոքր ինչ տատանուելուց յետոյ համաձայնեց. նրանք շտապեցին դէպի հօտը։

— Բարի աջողում, չոբան-ախպէր, ասաց ճանապարհորդն երրորդ հովուին, որը սպիտակ մազերով, բայց դեռ աշխուժ ծեր էր։ Սա հովիւների գլխաւորն էր, անունը՝ Թիւնի։

— Աստծու բարին, զոնաղ-ախպէր, պատասխանեց հովիւն ու իսկոյն վեր թռաւ օգնելու ճամբորդին, որ ձիուց իջնի։

Ճամբորդն իջաւ ձիուց, եափնջին ուսերից ձգեց, փռեց գետնին. ինքը պառկեց նրա վրա գլուխը կռանը յենած՝ ոտքերի մէջ առնելով հրացանը. նրա յոգնած, փրփրոտած ձին ման էր ածում Զամալը, իսկ Գիւքին ճանապարհի կիսում թողած պղինձը բերեց ու մի կողմ քաշուած՝ մորթեց գառներից մէկն ու փորոտիքը հանում էր։

Լուսինն արդէն բարձրացել էր լեռներից. գառները հովիւների շուրջ հաւաքուած՝ գիշերուայ ցրտի ազդեցութիւնից՝ երբեմն թափ էին տալիս մարմինը, բուրդը բիգ-բիգ կանգնեցնում. շներն էլ հաւաքուել էին Գիւքու

շուրջ, նրա մորթելը դիտում, աղքները հաւաքում։

— Հէյ զոնաղ-ախպէր, դարձաւ ծերունի Թիւնին ճամբորդին, դեռ բեխերդ նոր են ծլել, երևում է՝ անփորձ ես. ինչ մարդ կ'համարձակուի կէս գիշերին մէնակ ճանապարհորդել էս անհաւատներից արիւնլուայ արած տեղերում. դու գնում ես կամաց-կամաց. ոչինչ չես էլ մտածում, բայց քարի տակից, թփի յետևից թուրքմէնի գնդակը նշան է դնում կրծքիդ. մի՞թէ քո կեանքն էդքան էժան ես դին գնում, զոնաղ-ախպէր։ Եւ Թիւնին հառաչեց ու դարձաւ Զամալին.

— Զամա՛լ, կրակ արա՛։

Զամալը գետնին մի ցից տնկեց, ձին կապեց վրայից ու ինքը տաշեղներ ու չոր խոտեր հաւաքելով՝ սկսեց կրակ անել։

— Դիտես, զոնաղ-ախպէր,— բայց յանկարծ Թիւնին կտրեց իր խօսքն ու հարցրեց ճանապարհորդին— անունդ ինչ է։

— Ստեփաննոս Շահումեան, պատասխանեց ճանապարհորդը։

— Շահումենց հա՞, էշխանական ցեղից ես, դեռ չես ընկել մեր չօլերը-քօլերը... Որդի, ինչ ասեմ, Լուսաւորչի Աջը վկայ, չոբան եմ — ոչխարապահ, էսքան ծերացել եմ, բայց դեռ էնքան մորթած ոչխար չեմ տեսել, ինչքան մարդ։

Շահումեանը լուռ հետևում էր ոգևորուած ծերունուն։ Ծերունին շարունակեց։

—Էլ ինչ ասեմ, ոչխար, տաւար փախցնել, տներ ու գիւղեր կողոպտել, այրել... Դեռ շատ չի անցել, երկու ամիս կ'լինի, երկու չոբան ընկերներով արածեցնում էինք մօտակայ գիւղի Մինաս-աղայի ոչխարները։ Գիշերը թուրքերը վրա տուին։ Է՛հ, ինչ ասեմ, եթէ հինգ, վեց հոգի են, մի երկուսին դեռ մինչև նրանց մօտենալը կ'գլորես, մնացածին էլ— լաւ գիտես—եթէ հայի ձեռքը խանչալ լինի, ուր կուղարկի. մենք էլ — փառք Աստծու — մեր գէնքը մեր մէջքից ցած չենք գցում։ Բայց ինչ անես, եթէ վրա են տալիս քսանը, երեսունը, ոնց էսքանին ջուղաբ տաս։ Էս անգամ վրա տուին քառասուն թուրք։ Է՛հ, ինչ ասել կուզէ, որ մեր շնորքը ցոյց տուինք, բայց խանչալի ուսիս վրա իջած հարուածն աչքերս շշմեցրեց ու ես ընկայ ուշաթափ։ Հետևեալ առաւօտ արեգակն ընկել էր աչքերիս. մի քիչ ուշքի եկայ, նայեցի չորս բոլորքս — ինչ ոչխար, ինչ բան. նրանց տեղ դաշտի վրա մի քանի արիւնաթաթախ մարդկանց դիակներ էին ընկած։ Ես ամեն բան յիշեցի։ Ուսիս վէրքը վտանգաւոր չէր, միայն շատ թոյլ էի. վերկացայ կամաց-կամաց տեղից. եօթը թուրք էր գլորուած, որոնցից չորսին հրացաններով էինք սպանել, իսկ երեքին խանչալներով. ընկերներս էլ ընկած՝ մէկի գլուխն էր կէս արած, միւսինը բոլորովին մարմնից բաժանուած։ Կանգնեցի, նայեցի, նայեցի... ու քայլերս ուղղեցի դէպի գիւղը... Դու լաց ես լինում, զոնաղ-ախպէր, յանկարծ դարձաւ նա ճանապարհորդին.

—Շարունակիր, չոբան, ասաց Շահումեանն ու փափախը աչքերին քաշեց, որ արտասուքը չ'երևայ։

—Գնում եմ գիւղը, որ յայտնեմ Մինասաղային մեր փորձանքը, բայց, ինչ գիւղ, ինչ բան — կէսը քանդուած, կէսն էրուած. մի շունչ չ'կար ամբողջ գիւղում — կէսը կոտրուած էդ անհաւատ թուրքերից, կէսը փախել էր սարերը... Ա՜խ, զոնաղ-ախպէր, ուր է մի տէր, ասաց նա խորը հառաչելով։ Ապա նա հանեց սրինգն ու սկսեց տխուր եղանակով «չոբան-խաղն» ածել։

Լուսինն երբեմն դուրս էր գալիս ամպերից, երբեմն թագնւում էր նրանց յետև։ Ջամալը դրեց պղինձը կրակի վրա, իսկ Գիւքին երբեմն գառան մսի կտորտանքն էր ածում պղինձը, երբեմն մի ինչոր բանի համար ուշադրութիւնով շներին էր նայում։

Շներն անհանգիստ էին. նրանք վեր էին կենում տեղից, կրկին նստում, մի ինչոր բան

հոտոտում, երկու քայլ առաջ անում, ապա կրկին պոչը քաշած՝ իրանց տեղը դառնում։

— Ա՛ Թիւնի՛, շներին մի մտիկ տուր, դարձաւ նա դէպի ծեր հովիւը։

Թիւնին ընդհատեց սրինգն ու աչքերը դէպի շները դարձրեց. նա խկոյն որոշեց.

— Երևի հարամու հոտ են առել. դէ Գիւքի, Ուչթէփէ ել. զգոյշ կաց, նշան արա։

Գիւքին բլրի լանջով սկսեց վեր բարձրանալ, նա շուտով անյայտացաւ թփերի մէջ։

Հովիւներն աչքերն Ուչթէփէ էին դարձրել, որովհետև շներն այն կողմ էին նայում. Շահումեանը նոյնպէս վերկացաւ տեղից, հրացանը ձեռքն առնելով. ապա նա ուղղեց կողքից քարշ արած զարաբինան, որը մի քիչ ծռուել էր ու նա էլ այն կողմ սկսեց նայել։

Շուտով հեռու թփերի միջից լսուեց ուրախ խօսակցութիւն։

— Հա՛. սա մեր բարեկամ Ազրայիլն է եղել, ասաց Թիւնին. դու չէ՞ս ճանաչում նրան, զոնաղ-ախպէր։

— Չեմ ճանաչում, բայց լսել եմ նրա մասին, պատասխանեց Շահումեանը։

Թիւնին ու Զամալն էլ վեր թռան տեղերից ու մօտեցան մի հսկայ ձիաւորի, որը, ինչպէս ենթադրում էր Շահումեանը, «Ազրայիլն» էր լինելու։ Հովիւները նրան էլ խնդրում

էին գիշերն իրանց մօտ անցկացնել. նա ինչպէս երևում էր, համաձայնեց, իջաւ ձիուց ու շուտով բոլորը մօտեցան կրակին։

Շահումեանն առաջին անգամ աչքերն Ազրայիլի վրա դարձրեց ու կրակի լուսով տեսաւ իր առաջ մի ահարկու դէմք. նրա ահագին հաստութիւնով ածուխի պէս սև բեխերի ծայրերն անհետացել էին խճճուած երկար մօրուքի օղակներում, սև մօրուքը ծածկել էր մինչև անգամ այտերը, հասել մինչև աչքի կոպերն ու քիթը. երկար ու խիտ յօնքերը ծածկել էին աչքերի կէսը. գլխին դրած ունէր ահագին սև փափախ. վիզը կարճ էր ու հաստ, ուսերը՝ բարձր ու լայն։ Նա խկոյն գցեց եափնջին։

— Բարի՛ աջողում, ասաց նա Շահումեանին։

Շահումեանն ապշած՝ մոռացաւ մինչև անգամ պատասխանելու. նա զարմացած նայում էր այդ խկական *Ազրայիլին*, որի մասին շատ էր լսել. բայց չէր տեսել։ Այս անսովոր մարդը յայտնի Մխիթար աւազակապետն էր, որ յետոյ դարձաւ Դաւիթ-բէգի զօրքերի սպարապետ։

— Հը, մատա՛ղ, ե՞րբ ես եկել, դարձաւ նա կրկին Շահումեանին։ Ինչպէս երևում էր, նա էլ ճանաչում էր նրան։

— Այս գիշեր, պատասխանեց Շահումեանը։

—Ես Զավնդուր էի. շարունակեց աւազակապետը, Թորոսն ինձ ասեց, որ դու ուզում ես գնալ Հալիձոր Տէր-Աւետիքի մօտ ու ինձ շատ ցանկանում ես տեսնել։

—Ուրեմն Թորոսը քեզ ամեն բան պատմեց։

—Պատմեց, պատասխանեց աւազակապետը, բայց գիտեմ, մատաղ, դրանից բան չի դուրս գալ. իրաւ է, դու ինձանից աւելի խելօք ես, բայց, մինչև մեր Ղարաբաղի մէլիքներին, քեթխուդաներին կ'միացնես, մի երկու տարի կանցնի. էդքան ժամանակում արդէն մի քանի հազար հայ կ'կոտորեն թուրքերը, բայց— էն էլ ով գիտէ — էդքան ժամանակից յետոյ կ'միանան ամենքը թէ ոչ։ Էս անպիտան տեղն արիւնով է հոտում, մարդու գլուխը սոխի գին է բռնել, մի թէ դեռ կարելի է սպասել։ Աբի Ստեփաննոս, էգուց և եթ Վրաստան անցիր. ես ինքս քեզ հետ կ'գամ։

—Ես արդէն վճռել եմ, որ էլ ժամանակ կորցնելու չէ. էգուց և եթ ճանապարհ եմ ընկնելու, բայց դու չես գայ ինձ հետ. դու այստեղ շատ հարկաւոր կ'գաս թուրքերի աւազակութիւններից մի քանիսը զսպելով. բայց՝ ինչ ես կարծում, Մխիթար, լաւ եմ անում, որ Վրաստանից եմ մեզ առաջնորդ բերում։

—Ի՞նչ ասեմ, մատաղ, ես կարծում եմ, լաւ ես անում. մեր մեծամեծները կարծես

լայեզ չեն անում իրանցից մէկին իրանց գլուխ ճանաչել. ասած է՝ «տանուտէրտէրին օրհնեա՝ տէր չ'կայ». նրանցից ամէն մէկը իրան է մեծ ճանաչում, իրան համար ապրում։ Հէնց էս է պատճառը, որ մեր ուժը բաժան-բաժան լինելով, թուրքը մեզ հեշտութիւնով տիրեց։ Օտար տեղից եկած մարդու վրա աւելի ակնածութիւնով են նայում, նրա վրա մի քիչ ուրիշ տեսակ են դատում և եթէ նա արժանաւոր է ու մանաւանդ՝ իրանց օգտի համար է գործում, ես կարծում եմ, նրա հետ աւելի շուտով կ'միանան... բայց մի բան էլ կայ, Ստեփաննոս, մեծ համարձակութիւն է օտար տեղից մարդ բերելը, էդ մարդուն դեռ առաջ շատ լաւ պէտք է ճանաչել։

—Ուղիղ է, Մխիթար, և ես չ'ճանաչած մարդուն երբէք չեմ բերի։

Հեռուում լսուեցաւ ձիաների ոտի տրոփիւն. մօտեցան կրկին տասնումէկ ձիաւորներ։ Սրանք Մխիթարի ընկերներն էին։

—Հա՛, էդ դո՛ւք էք, տղերք, ասաց Մխիթարը. դէհ, պատմեցէք, ի՞նչպէս էք, բոլորդ էլ սա՞ղ էք, ի՞նչպէս որս արիք...

—Փառք Աստծու, բոլորս էլ սաղ ենք ու լաւ էլ որս ենք արել։ Էսօր խիստ շատ ենք աշխատել, էս անհաւատ թուրքերը շների պէս շատացել են։

—Դէհ, հանգստացէք, հանգստացէք, էգուց էլի կերթանք որս անելու...

Զիաւորներն իջան ձիերից ու պառկեցան կրակի մօտ։

Լուսինը հասել էր երկնքի մէջ տեղը, սար ու ձոր լուսաւորում։ Գառները ննջում էին անդորը, շները մորթած գառան փորոտիքը լափում, իսկ մեր Ղարաբաղցի հերոսները եափնջիների վրա նստած, հրացանները կողքերին, հովւական ընթրիքն էին անուշ անում։ Պղինձը քլթքըլթալի կրակից ցած էր բերած. տաք-տաք մսերը ձեռքերով հանում էին նրա միջից, լաւաշի մէջ փաթաթում ու ուտում։ Ընթրիքի ժամանակ խօսակցութիւնն առօրեայ ձև ստացաւ ու ամենից շատ խօսում էր Թիւնին, հիւրերին ուտելու ոգևորում։

Ընթրիքից յետոյ ամէնքը պառկեցան քնելու։

Դիշերուայ սառը հովը վերկացաւ, ամպերը խաղացրեց, խոտերը սւսրւացրեց. լուսինն երբեմն երևում էր, ժպտում, երբեմն թագնւում էր ամպերում, կարծես հովի հետ հանաքներ էր անում. քնած էր ամեն բան, քնած էին սար, ձոր, քար, գազան, թռչուն... քնած էին և մեր Ղարաբաղցիք եափնջիների մէջ փաթաթուած, հրացանները գրկած, գլուխը չոր քարի վրա դրած...

Չէ քնած միայն ծերունի Թիւնին. նա իր

ալևոր գլուխը կռան վրա յենած՝ նստած է ու մտածում, խորը մտածում. մտաբերում է նա Ղարաբաղի նախկին, երջանիկ օրերը, մըտաբերում է նրա փառքը... «Ղարաբաղ, ջան-Ղարաբաղ, շշնչում են նրա շրթունքները, ուր են քո արծիւ որդիքը, ինչ եղար դու. հոտած թուրքը ոտնակոխ է անում քո հողը, խմում է քո որդկերանց արիւնը, իսկ դու լուռ ես...»

Ու նստած է ծերուկը, խորը մտածում, ծանր հառաչում, և արցունքները թափւում են նրա խորշոմած այտերի վրայից...

Բ.

Ամենքը ոտի վրա էին, երբ արևելքում ամպերն ու երկինքը ոսկէ գունով ներկուել էին, իսկ արևմտքում Արուսեակը շտապում էր սարերի յետև։ Թփի մէջ անուշ ձայնով երգում էր բլբուլը. խոտերը ծածկուել էին մարգարտի ցօղով։ Առաւօտեան ցուրտը զգալի էր ամենքին. մեր Ղարաբաղցիք փափախները մինչև ականջներն էին իջեցրել, եափնջիներում կոլոլուել. գառները բուրդը ուռցրած՝ կռծում էին ցօղաթաթախ խոտը, իսկ շներն երբեմն թափ էին գալիս, երբեմն թաթով քիթն ու երեսը քորում։

Պանրից, կաթնից նախաճաշը ոտքի վրա վերջացնելուց յետոյ՝ աւազակների խումբը իրան հետ առած Շահումեանին՝ բաժանուեցաւ հովիւներից։

—Ա՛ Մխիթար, մեզ չ՛մոռանաս, կանչեց Թիւնին աւազակապետի յետևից։

—Զոբան, մի՛ վախիր, էլ այսուհետև Ուչթէփէյի վրա ոչ մի հայ չի մեռնելու։

Փոքր ինչ ճանապարհորդելուց յետոյ՝ Մխիթարի հրամանով աւազակներն երկու մասի բաժանուեցան. մի մասը Շէյլթան—Թուրնջի առաջնորդութիւնով յետ դարձաւ հայ գիւղերի վրայ հսկելու, իսկ միւս մասը Մխիթարի առաջնորդութիւնով պիտի Շահումեանին ճանապարհ ձգէր մինչև Ղարաբաղի սահմանները։

—Տղերք, գոռաց աւազակապետը իր բաժանուող ընկերներին, Ուչթէփէյից շատ չ՛հեռանաք, ինձ մի՛ք սպասի, ես ինքս ձեզ կ՛գտնեմ։ Ու երկու խմբերը բաժանուեցան իրարից։

Շահումեանն Ազրայիլի հետ գնում էր առաջ, միւս հինգ աւազակները փոքր ինչ հեռուից հետևում էին նրանց։

—Բայց տե՛ս, մատաղ, զգոյշ կացիր, դարձաւ աւազակապետը Շահումեանին։ Առաջին՝ այն մարդը, որին մեզ առաջնորդ պիտի բերես, պիտի հայ լինի, երկրորդ՝ ո՛չ միայն անունով հայ, այլ և հոգով ու երրորդ՝ պիտի

խելօք ու քաջ լինի,—յիշիր, որ դու մեծ գործի սկիզբ ես դնում։

—Անհոգ կա՛ց, Մխիթար։

—Ախը, գիտեմ, որ խելօք ես է՞, յարեց Մխիթարը։

—Բայց լաւ կանես, Մխիթար, ինձ ճանապարհ գցելուց յետոյ գնաս Հալիձոր ու տեսնուես Տէր-Աւետիքի հետ։

—Օ՛ այդ քէշիշից անհոգ կաց, գոռաց հիացած աւազակապետը, բաւական է, որ ձեր գալը լսի՝ թուրքերի բոլոր գիւղերը տակնուվրա կանի։

—Բայց, էլի տեսնես, լաւ կանես։

—Աչքիս վրա, պատասխանեց Մխիթարը։

—Մի բան էլ կայ, Մխիթար։ Ի հարկէ, եթէ ես գնամ վրացիների թագաւորի մօտ, ասեմ, թէ մեզ մի քաջ զօրավար տուր, որ նրա առաջնորդութիւնով թուրքերին դուրս քշենք Ղարաբաղից, նա կասի՝ «դու ո՞վ ես» ու գուցէ իմ խօսքերին էլ չ՛հաւատայ. ես ստիպուած պիտի լինեմ նրան ասելու, թէ ինձ Ղարաբաղի հայ իշխաններն են ուղարկել, բայց նա կարող է ինձնից հաստատութիւն պահանջել, ահա այս պատճառով հարկաւոր է մի խնդրագիր պատրաստել մեր իշխանների անունով ու կնքել նրանց կնիքներով։ Այդ դիպուածում ինչ պէտք է անեմ։

—Էդ արդէն չ՛գիտեմ, պատասխանեց

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՌ ԱԿԱ.ԳՐ

տխուր ձայնով աւազակապետը։

—Մի հնար կայ, Մխիթար, պէտք է կեղծ կնիքներ շինել տալ։

— Օ՜, դրանից անհոգ կաց. Ուստա-Պալի, դարձաւ նա իր ընկերներից մէկին, քո փէշակդ էսօր մեզ պէտք է գալու։

Ուստա-Պալին մեծ բաւականութիւնով գլուխ տուեց։

—Նուտով մենք կ՚հասնենք, դարձաւ Մխիթարը կրկին Նահումեանին, Ուստա-Պալենց գիւղը, էնտեղ կ՚ճաշենք, գիշերը անց կ՚կացնենք. մինչև միւս առաւօտ, ես կարծում եմ, կնիքները պատրաստ կ՚լինին։

—Մխիթար, ամէն բան լաւ է գնում, Աստուած մեզ յաջողում է։

Կէսօրին նրանք հասան Ուստա-Պալենց գիւղը. գիւղի ժողովուրդը զարմանքով նայում էր Ազրայիլին ու նրա ընկերներին։ Ուստա-Պալին նրանց իրան տունը տարաւ։ Ճաշից յետոյ Նահումեանը Դարաբաղի յիսուն հայ մեծամեծների անունով վրացիների Վախտանգ Զ. թագաւորին ուղղուած մի խնդրագիր շինեց, որով հայ մեծամեծները, իբր թէ, խնդրում էին Վախտանգին իրանց մի զօրավար ուղարկել թուրքերին Դարաբաղից դուրս քշելու համար։ Խնդրագրում յիշուածէր նոյնպէս, որվրացիների շահերին շատ յարմար է Դարաբաղի նման մի

հայ դաշնակից տէրութիւն ունենալ և այլն և այլն։ Խնդրագրից յետոյ Նահումեանը զբաղուեց կեղծ կնիքների ձևերը շինելով։ Նա Դարաբաղի իշխաններից մի քանիսի անուանի ու ազգի միայն սկզբնատառերն էր գրում, մի քանիսի անունները մականուններով, մի քանիսի էլ ազգ ու անունը ամբողջապէս գրելով։ Ապա ամէնքն Ուստա-Պալու առաջնորդութիւնով զբաղուեցան կնիքները փորագրելով։ Կնիքները պատրաստելուց յետոյ, Նահումեանը զմուռով խփեց խնդրագրի վերջը։

Գ.

Հետևեալ առաւօտ հիւրերը մնաս բարով ասացին Ուստա-Պալու կնկան ու Պալուն էլ իրանց հետ առնելով՝ դուրս եկան գիւղից։

Նրանք ճանապարհը դէպի հիւսիս-արևմուտք ուղղեցին։ Դարաբաղի բնութիւնը հետզհետէ փոխւում էր. սև, ահարկու լեռները բլրանում էին, նեղ կրճերը ձորանում, խոր ձորերը հովտանում. լեռնական աղքատ բուսականութիւնը տեղի էր տալիս հազարերանգ ծաղիկներով զուգուած շքեղ կանաչին. օդը մեղմանում էր ու քնքշանում։

Ճամբորդները լուռ՝ արշաւում էին. իւրա-

քանչիւրը նրանցից խորասուզուած էր մտածմունքներում և՝ յիրաւի շատ բան կար մտածելու. այդ աղմկալի օրերում այնքան դէպքեր, այնքան նորութիւններ էին պատահում, որ նոր-նոր տպաւորութիւնները յաջորդում էին միմեանց և իւրաքանչիւրի խելքն ու միտքը գրաւում։

Շահումեանը թեքուեցաւ թամքի գլխին՝ թուլացնելով սանձը. նրա մտածութիւնով լի աչքերը դէս ու դէն էին նայում. կարծես մոռացել էր, թէ ուր է նա և ինչ է անում։ Նրա միտքը թռչում էր հեռու, հեռու...

Նա յիշում էր իր մանկական խաղերը հասակակիցների հետ. նրա ընկերներն ուրախ, զուարթ խաղում էին, իսկ նա հեռու նստած՝ աշխատում էր մտաբերել իր ուսուցիչ-քահանայի այն օրուայ պատմածը. նրա դեռ մանկական չ'հաս գլխում նկարւում էին իր հայրենիքի մեծ անձնաւորութիւնները՝ Վարդանը, Վահանը... և թւում էր նրան, թէ ահա հեռուից կ'գայ իսկոյն այդ հզօր Վարդանն ու կ'կանչէ որոտալիձայնով. «եղբայրնե՛ր, հերիք է մեզ տառապել, հերիք է մեզ օտար լծի տակ մնալ, գնա՛նք, վրէժ առնենք մեր թշնամիներից մեր ազգի ու եղբայրների փրկութեանհամար...» Բայց ահա՛ անցան մանկութեան օրերը

նա արդէն երիտասարդ է և իր ժամանակի համար լաւ կրթութիւն է ստացել. նա տեսնում է այն ախտը, որ բռնել է իր հայրենիքը։ Թուրքերը հետզհետէ լցնում են իր Ղարաբաղն ու պիղծ ձեռքերը տարածում հայկական սուրբ եկեղեցու վրա... Իշխանները չեն գործում, ամենքը մտածում են հնարներ միմեանց վայր ձգելու համար... Ու տեսնում է նա այս բոլորը, զգում է, բայց չի համարձակւում բան ասել,—գիտէ, որ եթէ մի բան ասի, իսկոյն նրան կ'լռեցնեն, ասելով՝ «դու չահիլ ես, բան չես հասկանում». յիշում է և այն անհանգիստ, անքուն գիշերը, երբ նրա գլխում ծագեց մի մեծ միտք—կանչել դրսից մի հզօր մարդ, որ կարողանայ իր շուրջը հաւաքել ազատութեան զաւակներին...

Մխիթարի ձայնն ընդհատեց նրա մտածմունքները.

—Ղարաբաղի սահմանը, Ստեփաննոս։

Նրանք կանգնած էին մի բլրի գլխին, որի տակ ձգւումէր ընդարձակ,կանաչ դաշտավայրը։

—Ստեփաննոս, ես էլ քեզ հետ եմ գալու, քեզ մէնակ չեմ թողնի։

—Չէ, Մխիթար, հարկաւոր չէ. ես մտնելու եմ Վրաստան մէնակ, ծպտուած, որ ոչ ոք չ'ճանաչի և ես առիթ ունենամ այնտեղի հայ զօրավարներին աւելի մօտիկ ճանաչել։

—Դու՛ գիտես, Ստեփաննոս, բայց լաւ չես անում։

—Դու, Մխիթար, այստեղ աւելի պէտք կ'գաս։

—Դէ, գնա՛ս բարով, մատաղ։

—Մնա՛ս բարով, Մխիթար։ Նրանք համբուրուեցան.

—Մնա՛ք բարով, ասաց նա և միւսներին ու համբուրուեցաւ բոլորի հետ։

Եւ ձիու գլուխն ուղղեց դէպի դաշտավայրը։

—Ստեփաննո՛ս, եթէ նեղ տեղն ընկնես, անունս տուր...

Շահումեանը ժպտաց։

—Մի՛ ծիծաղիր, Ստեփաննոս, *ազրայիլը* թևեր էլ ունի...

Շահումեանի նժոյգն արդէն իջաւ դաշտավայրը. ոտքերի տակ զգալով փափուկ հարթութիւն՝ նա խրխնջաց, նրա ջղերը լարուեցան, ոտքերն սկսան թեթև շարժուել, գլուխը առաջ քաշեց ու յանկարծ արշաւեց։

Երիտասարդը կարծես կպած էր մէջքին։

Ղարաբաղի նժոյգը արշաւում էր սարսափելի արագութիւնով. նրան ո՛չ մի ձիաւոր այս ժամին չէր կարող զսպել, բայց երիտասարդը չէր էլ մտածում զսպել։ Վերջապէս նրանք անյայտացան մշուշի մէջ...

Ազրայիլը կատարեց իր խօսքը։

—Տղե՛րք, ասաց նա Շահումեանի անյայտանալուց յետոյ, ինձ հետևեցէ՛ք, ու իր ընկերներով սլացաւ նրա յետևից։

Նա հետևում էր Շահումեանին գիշերցերեկ առանց նրան աչքից կորցնելու ու առանց նրանից նկատուելու և իրաւ, եթէ Շահումեանը նեղ տեղն ընկնէր ու տար Ազրայիլի անունը, նրան կ'տեսնէր խկոյն իր մոտ նրա կատաղի ընկերներով... Մխիթարը ճանապարհ ձգեց Շահումեանին մինչև Մցխէթ առանց նրանից տեսնուելու և ապա կրկին աննկատ՝ յետ դարձաւ իր հայրենիքը— Ղարաբաղ։

Դ.

Երկու շաբաթ էր, ինչ Շահումեանը Մցխէթումն էր. նա իջել էր մի հայ պառաւի մօտ։ Ծանօթանալով թէ բարձր, թէ հասարակ շրջանների հետ, նա անդադար ուսումնասիրում էր Վրաստանի զինուորական դրութիւնը ու մանաւանդ այնտեղի հայ անձնաւորութիւններին։ Նրան պատմում էին, որ թէև Վախտանգ թագաւորը չի կարող պարծենալ իր քաջութիւնով, բայց նրա ուսում-

նասէր ու խելօք լինելը յայտնի էր ամենին։ Նրան պատմում էին, որ Վրաստանը թէև քիչ զօրքեր ունի, բայց նրանցից սարսափում են թուրքերը. քաջ զօրավարների թւում կային և մի քանի հայեր, մանաւանդ մէկը՝ խելօք ու անյաղթելի Դաւիթ-բէգը, որ ծընուած էր Ղարաբաղում ու սնուած Վրաստանում։ Նա, ինչպէս երևում էր, շատ ժողովրդականութիւն էր ստացել, մանաւանդ նրա համար, որ, չնայելով իր բարձր պաշտօնին, մնում էր քրիստոնեայ, այն ինչ վրացի իշխաններից շատերը ու մինչև անգամ թագաւորն իրանց հայրենի ժառանգութեան վրա հաստատ մնալու համար՝ փոխում էին իրանց կրօնն ու մահմեդականութիւն ընդունում։

Պատմում էին, որ Դաւիթ-բէգը փոքրուց իր ընտանիքի ու շատ ուրիշների հետ մի ինչ որ մէլիքի առաջնորդութիւնով գաղթել է Վրաստան։ Վրացիների թագաւորը նրա ընդունակութիւններն ու քաջութիւնները տեսնելով՝ իրան մօտեցրեց, շինեց իր զօրքերի զօրավար ու մինչև անգամ բէգութիւն տուեց։ Այդ ժամանակ մէլիքն իր ժողովրդի ու Դաւիթ-բէգի ծնողների հետ կրկին Ղարաբաղ դարձաւ, իսկ նրան թագաւորն իր մօտ պահեց։ Քիչ ժամանակից յետոյ Դաւիթ-բէգը լսեց, որ թուրքերը մորթել են նրա ծնողներին ու երդուեց, որ չ'պիտի մեռնի, մինչև թուրքերից տասնապատիկ վրէժը չ'հանի...

Շահումեանի ընտրութիւնը կանգնեց Դաւիթ-բէգի վրա, բայց ուզեց դեռ ծանօթանալ նրա հետ ու տեսնել, թէ ինչ չափով նա սիրում է Ղարաբաղը։

Ե.

Դաւիթ-բէգն այդ ժամանակ գնացել էր Սօփանաուրի անտառները որսի։ Շահումեանը վճռեց չ'սպասել նրա դարձին, այլ գնալ ու այդ բնութեան ծոցում ծանօթանալ նրա հետ ու խօսել առանձնակի։ Նա հագաւ Ղարաբաղի հագուստը, զէնքերը վրան առաւ, հեծաւ իր կատաղի ձին ու քշեց դէպի Սօփանաուր։ Բայց նա երկար չ'գնաց—մի քանի ժամ ճանապարհորդելուց յետոյ նա տեսաւ Դաւիթ-բէգին։

Դաւիթ-բէգը որսից յետ էր դառնում. նրան հետևում էր երկու սայլ, գոմէշներով լծուած, որոնց քշում էին վրացի սայլասաններ «հարալ» կանչելով։ Սայլերի վրա դրուած էր նրա որսը՝ երկու եղջերու, յովազ ու վայրի թռչուններ։

Դաւիթ-բէգը գնում էր նրանցից մի վարսուն քայլ առաջ դանդաղ կերպով, աշխատե-

լով ձին սանձել։ Նա մի քառասնից անցած տղամարդ էր, բարձրահասակ ու հաստակազմ. նրա երկար բեխերի ծայրերը կեռացած՝ ներքև էին իջել, մօրուքն ածելած էր, վրացնակ գլխարկի տակից երևում էին նրա փոքր ինչ ալեխառն մազերը, թաւ յօնքերի տակից ածուխի նման սև, թափանցող ու խելօք աչքերը. նրա ճակատի վրա արդէն երևում էին խորշոմներ, որոնք դէմքին աւելի դաժան կերպարանք էին տալիս։ Նա գնում էր լուռ՝ մէկ ձեռքով սանձը բռնած, իսկ միւս ձեռքը երկայրու երախակալին յենած։

Նա սովորաբար տխուր էր ու շատ քիչ էր խօսում, որով շատ զանազանւում էր վրացիներից. նա աւելի շատ մտածում էր, մտածում էր և այժմ։ Արդեօք ինչի՞ վրա։

Նրա յետևից վրացի սայլապանը փչում էր իր «հօրօլօն». նրան դուր չէին գալիս այդ քունը բերող «հօրօլօն, այդ դանդաղաշարժ գոմէշները. նրա ականջին հնչում էին իր հայրենիքի լեռնական, կրակոտ երգերը, նա տեսաւ իր առաջ անգունդներ թռչող Ղարաբաղի նժոյգները. նա, կարծես նոյն ցնորքների շարունակութեան մէջ, տեսաւ մի ձիաւոր. հաստ փափախը, զինավառութիւնը, կրակոտ նժոյգը նկարեցին նրա առաջ ազատասէր Ղարաբաղցուն. նրան աւելի վառ գոյներով ներկայացաւ իր հայրենիքը, նրա ներկան, թուրքերի բռնութիւնները... յանկարծ նա յիշեց իր մորթոտած ծնողներին ու նրա ատամները կատաղի կերպով կրճտացին. նրա կրծքից դուրս թռաւ գազանի մի մռնչիւն, աչքերը փայլատակեցին բարկութեան կրակով ու նա կատաղի կերպով հուպ տուեց ձեռքին բռնած երախակալը։

Այդ ժամանակ նրա աչքին ընկաւ նոյն ձիաւորը. նա տեսաւ, որ այդ ձիաւորը ցնորք չէ, նկատեց, որ նա վաղուց հետևում էր իրան, և գանգուտուեց ձիուն Դաւիթ-բէգը, արշաւեց ձիաւորի վրա ու կանչեց սպառնալի ձայնով։

— Ո՞վ ես դու։

— Բարեկամ։

Դաւիթ-բէգի ձեռքերը թուլացան. ձիաւորի արտասանած մի բառում կարծես հնչեց նրա ստրկացած հայրենիքի ձայնը, որը կարծես օգնութիւն էր կանչում. «բարեկամ»։

Նա մեղմ ձայնով հարցրեց ձիաւորին.

— Ո՞րտեղացի ես, եղբայր։

— Ղարաբաղցի պատասխանեց ձիաւորը։

Բայց նա էլ չ՝սպասեց նրա պատասխանին. նա վաղուց դէմքից, հագուստից ու վերջապէս արտասանած մի բառից ճանաչեց նրա Ղարաբաղցի լինելը. նա փաթաթուեցաւ ձիաւորին և երկար, երկար համբուրւում էին նրանք։

—Ուրիշ, ինչէ մեր Ղարաբաղը, հարցրեց Դաւիթ-բէգը հրճուանքով։

— Միթէ չ'գիտես...

— Օ, գիտեմ, գիտեմ, էլ մի ասիր...

Գիւղացիները, որ շշկլուած սրանց օտարոտի հանգիպումից՝ սառած մնացել էին տեղերը, շարունակեցին կրկին ճանապարհը։ Մցխէթն արդէն երևում էր։ Դաւիթ-բէգն իր ընկերի հետ մօտեցաւ Արագուա գետին. փոքր ինչ լուութիւնից յետոյ՝ նա հարցրեց իր ուղեկցին.

—Ինչու ես եկել։

—Ես եկել եմ քեզ տանելու։

—Ինձ տանելու. ինչու ես ուզում ինձ տանել։

—Թուրքերին Ղարաբաղից դուրս քշելու համար։

— Թուրքերի՞ն... ու նրա դէմքը խոժոռեցաւ, աչքերը փայլեցին վագրի աչքերի նման. նա բարկացած հարցրեց։

—Ասա՛, ո՞վ ես դու։

— Ես Ստեփաննոս Շահումեանն եմ։

—Ինչու ես ինձ տանում։

—Որ մեզ առաջնորդես։ Հերիք է, դու բաւական ծառայեցիր վրացիներին։ Ուղիղ են ասում, որ հայերն օտարների համար լաւ ծառաներ են, իսկ իրանց համար վատ տէրեր։ Դու լաւ ծառայ էիր. արի այժմ ու կարգի բեր

քո հայրենիքի գործերը։ Եթէ դու ազնիւ մարդ ես, եթէ դու վախկոտ չես ու եղբայրներիդ արիւնը կանչում է քեզ, դու պիտի այստեղ ձգես բոլորը—փառքը, պատիւն ու պիտի զոհես քո անձը հայրենիքի փրկուելուն, եթէ ոչ՝ դու արժանի չես այսուհետև Ղարաբաղցի անուան։

Գրէթէ դեռ պատանի Շահումեանն ասում էր այս բոլորը դողդոջուն ու վրդովուած ձայնով, բայց նրա աչքերը, փայլուն աչքերը ուղղակի նայում էին այն ահարկու մարդուն, որի լոկ անունը սարսափ էր բերում շաաերին։

Դաւիթ-բէգը լսում էր լուռ. առաջ նա դէմքը խոժոռեց, լսելով Շահումեանի կծու խօսքերը, բայց յետոյ նրա կնճիռները բացուեցան ու նա մեղմ ձայնով հարցրեց երիտասարդին.

—Ուրեմն ուզում էք ապստամբել։

—Այո՛, ուզում ենք ապստամբել։

Դաւիթ-բէգն էլ ոչինչ չ'հարցրեց ու խորասուզուեց մտածմունքի մէջ. նրանք շարունակում էին իրանց ճանապարհը լուռ։ Վերջապէս Դաւիթ-բէգը գլուխը բարձրացրեց, նրա աչքերը փայլում էին ոգևորութիւնով։

—Լաւ, ես պատրաստ եմ կեանքիս մնացորդը զոհել հայրենիքիս համար. դու ուղիղ

ասացիր՝ թէ հայերը լաւ ծառայ են օտարի ու վատ տէր իրանց համար։ Ես գալիս եմ։

Արագսա գետը հոսում էր հանդարտ. նրա լայն ու յստակ ալիքները փայլում էին հայելու նման։ Արևը մօտենում էր լեռներին։

—Մէլիքներն ինչ են անում, հարցրեց Դաւիթ-բէգը։

—Նրանցից մի քանիսին տեսել եմ, պատասխանեց Շահումեանը. նրանք համաձայն են մեզ հետ միանալու. միւսներին դեռ չեմ տեսել։

—Եւ հարկաւոր էլ չէ։ Ինձ ժողովուրդ է հարկաւոր. ժողովրդի մարդիկ պիտի առաջնորդեն ժողովրդին. ես ճանաչում եմ Ղարաբաղի ազատասէր ժողովուրդը։

—Բայց ինչ ես կարծում, Դաւիթ-բէգ, թագաւորը քեզ կ'թողնի։

—Ես նրան չեմ էլ հարցնի։

—Բայց ինչ կուզէ լինի, նրա համաձայնութիւնով աւելի լաւ կ'լինի. ես դրա համար հոգացել եմ։

—Ի՞նչ ես արել, հարցրեց ժպտալով Դաւիթ-բէգը։

—Ես մի խնդիր եմ շինել Ղարաբաղի հայ մեծամեծների անունով ու կնքել եմ նրանց կեղծ կնիքներով։

—Եւ այդ բոլորը արել ես սուրբ գործի համար. դէհ, կեցցես քաջ Ղարաբաղցի, կանչեց Դաւիթ-բէգը ձեռքը խփելով նրա մէջքին. ապա նա փաթաթուեց ու հայրական գորովով համբուրեց Շահումեանի բաց ճակատը։

Շահումեանն ամօթխածութիւնով գլուխը կախ ձգեց։

—Շահումեան, ասաց Դաւիթ-բէգը խոլիմաստ ձայնով, Ղարաբաղը ազատ է լինելու։

Արևը մօտեցել էր սարերին. վերջալուսով փայլում էր ջինջ ու անամպ երկինքը, փայլում էին անտառախիտ լեռները, փայլում էր յստակ Արագսան, փայլում էին և մեր հերոսների դէմքերն արևի վերջին լուսով, հայրենիքի փրկուելու լուսով...

Զ

Ծերունի Վախտանգ Զ. յայտնի օրէնսգիր ու պատմաբան թագաւորը չէր բազմած իր պարսկական ճաշակով զարդարուած գահի վրա, այլ զանազան խռնուած թղթերի ու մագաղաթների փոշում գրում էր իր տարեգրութիւնները, երբ մտաւ Դաւիթ բէգն ու ողջունեց թագաւորին։

—Օհ՛օ, բէգ, բարով, որսից նո՞ր ես դարձել. ասա մի տեսնեմ, ի՞նչ ես ինձ բերել։

—Երկու եղջերու քեզ փեշքեշ, եթէ խընդիրս կ'կատարես։

—Ասա՛, բէգ, ի՞նչ ես ուզում։

—Թո՛յլ տուր ինձ գնամ Ղարաբաղ։

—Ղարաբա՛ղ, բացականչեց ապշած Թագաւորը, Հապա Վրաստա՞նը։

—Թագաւո՛ր, այժմ աւելի պէտք եմ իմ հայրենիքին, Վրաստանն ապահով է քեզանով։

—Բէգ, ո՞վ քեզ խելքից հանեց...

—Թագաւո՛ր, Ղարաբաղի վրայ բռնացել են թուրքերը. նրանք անխնայ կերպով կոտորում են հայերին։ Հայ մեծամեծները խնդրում են քեզանից, որ նրանց օգնես, այսինքն՝ մի հմուտ զօրավար տաս, որի առաջնորդութիւնով նրանք դուրս քշեն թուրքերին Ղարաբաղից։ Նրանց լիազօր դեսպանն ինձ է ընտրել

—Ո՞վ է այդ դեսպանը, կանչել տա՛ր։

Դաւիթ-բէգը դուրս գնաց ծառաներից մէկին ուղարկելու Շահումեանի յետևից, իսկ ինքը շուտով յետ դարձաւ։

—Բէգ, դարձաւ տխուր ձայնով Վախտանգ Թագաւորը Դաւիթ-բէգին, միթէ՞ իմ աղն ու հացը քեզ դառն թւեցան։

—Թագաւո՛ր, ինչո՞ւ ես այդպէս ասում, միթէ՞ վնաս է քեզ Հայաստանի ազատ լինելը։

Թագաւորը լռեց. նա տխուր կերպով գլուխը կախ ձգեց։

Շահումեանը մտաւ. նա երկու ձեռքով բռնած ունէր խնդրագիրը։ Մօտենալով Թագաւորի թախտին՝ խորը գլուխ տուեց ու խնդրագիրը յանձնեց Վախտանգին։

Շուտով մտաւ և թարգմանիչը, որ Աւթանդիլ հայ իշխանն էր։

Ընթերցումից յետոյ Թագաւորը գլուխը կախ գցեց ու լուռ՝ մտածում էր. յետոյ նա փոքր ինչ խիստ ձայնով հարցրեց Շահումեանին.

—Ո՞վ ես դու։

—Ես Ստեփաննոս Շահումեանն եմ։

—Խնդրագրում յիշուած իշխաններից մէկը, լրացրեց Դաւիթ-բէգը։

—Բէգին ե՞րբ տեսար, դարձաւ Թագաւորը կրկին Շահումեանին։

—Այսօր, պատասխանեց Շահումեանը։

—Ինչո՞ւ ուղղակի ինձ մօտ չ'եկար ու չ'յանձնեցիր այս թուղթը։

Շահումեանը լռեց։ Դաւիթ-բէգը տաքացաւ։

—Թագաւո՛ր, նա չէր կարող քեզ մօտ գալ, մինչև իմ համաձայնութիւնս չառնէր, եթէ ես չ'ուզենայի, դու ինձ զօրով էլ ղրկէիր, ես ոչինչ չէի կարող շինել, իսկ եթէ ես չըհամաձայնէի, նա կըգիմէր մի ուրիշի, որն ինքը

ցանկանար այդ սուրը գործի առաջնորդութիւնը, ապա նա քեզ կըդիմէր, թողնելու նրան։

Թագաւորն իր փշրուած հայեացքը ձգեց Դաւիթ-բէգի վրա։

—Դէ գնա՛, բէգ, Աստուած յաջողութիւն տայ...

—Թագաւոր, ես չեմ մոռանայ, որ դուխմ բարերարն ես եղած, բացականչեց Դաւիթ-բէգն ու չոգեց թագաւորի առաջ։ Թագաւորը համբուրեց նրա ճակատը։

Է.

Երեք օր էր, ինչ Վախտանգ թագաւորը պալատից չէր դուրս գալիս։ Նա սաստիկ տխուր էր, տխուր էր մանաւանդ, որ ոչ թէ միայն Դաւիթ-բէգին էր կորցնում, այլ ուրիշ դեռ շատ քաջ տղամարդիկ։ Այս երեք օրում նրան ներկայացան Վրաստանի ամենաքաջ հայ զինուորներն ու անուանի զօրավարները. նրանք թոյլատրութիւն էին խնդրում նրանից միանալ Դաւիթ-բէգի հետ։ Նրան արդէն հրաժարական էին տուել Բալինդուր, Աւթանդիլ, Փանտուր-Ջաքար, Գիսրգի հայ իշխաններն ու շատերը։

Նա զարմանում էր այս մարդկանց վրա, որոնք թողնելով հանգիստ ու վայելչութիւնով լի կեանքը՝ հայրենիքի ազատուելու յուսով վառուած՝ գնում էին դէմ դնելու կուրծքը արհաւիրքներին ու թնդանօթի ռումբներին. նա զարմանում էր ու տխրում, որ կորցնում էր նրանց։

Այս երրորդ օրը Դաւիթ-բէգը պիտի դուրս գար Վրաստանից իր ընկերներով։

Առաւօտուց Մցիխէթը շարժումի մէջ էր։ Յանկարծ երկիրը դղրդաց ու չորս հարիւր հայ ձիաւորներ շրջապատեցին Վախտանգ թագաւորի պալատը։

Թագաւորը դուրս եկաւ պատշգամբ։

Նրան տեսնելուն պէս՝ հայ ձիաւորները հրացաններն իջեցրին։

Վախտանգն երբ տեսաւ այդ հայրենիքի զինուորներին, նրանց զինավառութիւնը, կարգապահութիւնը, ոգևորուած ու յուսով լի ճակատները, նրա աչքերը չբակալեցին։

Նա նայեց նրանց լուռ և ապա խօսեց.

«Կտրիճներ, այսօր դուք վճռել էք մահը գերազանց համարել կեանքից ու դրա համար թողնում էք սիրուն Վրաստանը, շտապում արիւնլուայ հայրենիք... հայրենիքի արժանաւոր որդիք, դրա համար ես օրհնում եմ ձեզ։

«Քաջ հայեր, ձեր դէմքերի վրա նկարուած է բուռն ոգևորութիւն, ձեր դէմքերի վրա նկարուած է ձեր յաղթանակի հաւատը—այսքանը բաւական է.—դուք անյաղթելի կըմնաք. մեռնէք էլ, յաղթող կըմեռնէք. բայց, երբ ձեզ առաջնորդում է դիւցազն բէգը, սիրա առէք, հայեր, աւետում եմ ձեզ՝ ձեր հայրենիքը ազատ էք տեսնելու»:

Ձիաւորների շարքերը դղրդացին. ոգևորուած ու շարժուած կրծքերից դուրս թռան ահարկու ձայներ.

—Կեցցէ՛ս թագաւոր, կեցցէ՛ս Դաւիթ-բէգ...

—«Կեցցէ՛ս... Դաւիթ-բէ՛գ»...կրկնեցին Կովկասի լեռները:

«Քաջ հայեր, շարունակեց թագաւորը, սիրեցի՛ ձեզ. դուք գիտէք իմ ուժը—եթէ պէտք գամ ձեզ, գիմեցէք ինձ, բայց դուք էլ չ'մոռանաք ձեզ սնող Վրաստանը. բէգ, չըմոռանաս քո Վախտանգին...»

Արտասուքը խեղդեց նորա ձայնը. նա էլ չըկարողացաւ շարունակել: Դաւիթ-բէգը սանդուխներից վեր վազեց և ուղղակի փաթաթուեց նրա վզին. նրանք համբուրում էին:

Դաւիթ-բէգը կրկին ցած վազեց ու նշան տուեց:

Ազատների խումբը դուռաց. «մնա՛ս բարով, թագաւո՛ր» ու չորս հարիւր հրացան միաձայն ճայթեցին, իսկ լեռները բազմապատկեցին հրացանների թնդիւնը:

Դաւիթ-բէգն առաջ անցաւ. նրա աջ կողմը բռնեց Շահումեանը:

—Առա՛ջ, դուռաց Դաւիթ-բէգը:

Ձիանների սանձերը թոյլ թողնուեցան. ազատների դունդն արշաւեց ահեղ հրամանատարի յետևից...

Վախտանգ թագաւորը պալատի կտուրը բարձրացաւ, որ երկար տեսնի այդ ազատութեան զինուորներին:

Խումբը հետզհետէ նրա աչքում փոքրանում էր. նրան ծածկում էր երբեմն ձիանների ոտի տակի փոշին, երբեմն անհետանում:

Փոշին մէկ անգամ էլ նրանց շրջապատեց, մէկ անգամ էլ քամուց քշուեց, բայց այս անգամ այլ չէր երևում ազատների դունդը...

Թագաւորը սփրթնել էր, նրա աչքերը կարմրել էին. նա դարձաւ դէպի իրան շրջապատող վրացի իշխաններին ու ասաց:

—Ահա՛ ձեզ մարդիկ...

Ը.

Դաւիթ-բէգն իր գնդով վաղուց արդէն դուրս էր եկել Վրաստանի մայրաքաղաքից ու մօտենում էր Ղարաբաղին։ Ճանապարհին նրանց պատմում էին շատ գիւղացիներ, որ Ղարաբաղում ապստամբութիւն կայ, որ հայերը կռւում են թուրքերի հետ...

Ձիաւորները նկատեցին, որ կապուտակ երկինքն այն կողմը, դէպի ուր գնում էին նրանք, հետզհետէ սկսում էր մթնանալ, կարծես սևսև ամպեր սպառնում էին այնտեղ խաղաղ երկնքին. Ղարաբաղի մթին լեռներն էին դրանք։

Բայց այդ լեռներից որոտումի ձայներ էին լսւում, կարծես ամպերը կռւում էին այնտեղ իրար հետ ու նրանց խուլ արձագանգը երբեմն լսւում էր, երբեմն ընդհատւում։

Ձիաւորներն ուշադրութիւնով սկսան ականջ դնել։

—Կռիւ կայ այնտեղ, ասաց Դաւիթ-բէգը, այդ հրացանների թնդիւններն են, պէտք է շտապենք։

Ձիաներն արագ-արագ ընթանում էին. սևսև լեռներն արդէն պարզ էին երևում, նրանք կարծես կախուած էին երկնքից։

Ձիաւորները մտան մի ձոր, որն սկսւում էր հետզհետէ նեղանալ, մթնանալ ու բարձրանալով՝ կորչում էր զանազան պտուտներով, նրան երկու կողմից պատում էին լերկ ահարկու ժայռեր. ձորի գլխից հոսում էր մի գետակ շառաչելով ու փրփրալով։

Մեր ճամբորդները լսեցին ձորի խորքից ձիաների ոռքերի տրոփիւն. յանկարծ մի անտեսանելի կրճից դուրս թռան երկուհարիւրի չափ ձիաւորներ և սկսան Դաւիթ-բէգի զօրքերի կողմ արշաւել. նրանց առաջ ընթանում էր մի հսկայ ձիաւոր ահագին մերկ սուրը ձեռքին։

Դա Ազրայիլ աւագակապետն էր...

Այսպիսով առաջին անգամ Ազրայիլը միացաւ Դաւիթ-բէգի հետ։

Աւագակապետը յայտնեց, որ փոքր ինչ առաջ այս ձորի միջում գործ էր ունեցել թուրքերի հետ, որոնք Դաւիթ-բէգի գալու լուրն առնելով, ուզեցել էին նրա ճանապարհը բռնել. նրանց վրա յանկարծակի յարձակուել էր ինքն ու յետ վռնտել նրանց բռնած տեղերից։ Ահա, թէ ինչ հրացանների թնդիւններ էին լսում Դաւիթ-բէգն իր ուղեկիցներով։

Մխիթարը յանձնեց Դաւիթ-բէգին Շէնհէր ամրոցի բանալիները, որն արդէն գրաւել էր ինքը։

Եւ ահա 1722 թուականին, մայիս ամսուայ մի սիրուն երեկոյ Դաւիթ-բէգն ազատների գնդով մօտենում էր Շէնհէրին։

Սիրուն էր այն երեկոն... Արևն երկնքի բարձրութիւնից քնքշութիւնով նայում էր հայրենիքի զինուորներին. զէնքերն ու զրահները փայլում էին նրա ճառագայթների տակ. թեթև քամին շարժում էր հայկական դրօշակը։

Դաւիթ-բէգն ընթանում էր իր գնդի առաջ՝ հեծած ամեհի սև ձին. նրա գլուխը կախ էր ընկել կրծքի վրա. նա բոլորովին խորասուզուած էր մտածմունքներում.—քանի՞, քանի՞ տարիներ էին անցել. ինչ նա չէր տեսել իր ծանօթ տեղերը, իր մռայլ ու սիրուն հայրենիքը...

Նրա յետևից ընթանում էին Վրաստանի հայ իշխաններն երիտասարդ Շահումեանի և Ազրայիլ Մխիթարի հետ միասին ու յետոյ հայ զինուորների գունդը։ Բոլորի դէմքերի վրա փայլում էր ոգևորութիւնը, բոլորը զբաղուած էին մի մտքով—շուտով կռւի դուրս կանչել անխիղճ թշնամիներին, շուտով նրանց հետ չափուել ուժերով...

—Դէպի ամրոցը, լսուեցաւ Դաւիթ-բէգի հզօր ձայնն ու մի րոպէից յետոյ ազատների գունդն ամրոցն էր մտնում, որի վրա նոյնպէս ծածանում էր արդէն հայկական դրօշակը...

Դաւիթ-բէգը հրամայեց ամրացնել Շէնհէրը։ Պարիսպները նորոգւում էին, փորւում փոսեր, մզկիթի տեղ վերականգնում էր մատուռը տէրունական խաչը գլխին...

Ամէն կողմից Դաւիթ-բէգին օգնելու էին գալիս հայերը, երդւում, որ կրկատարեն նրա ամէն մի հրամանը, որ կըմեռնեն նրա հետ։

Եկաւ Զօրան-Թիւնին լիսուն զինուորուած հովիւ գլուխն հաւաքած։

Այսպիսով՝ երկու շաբաթուայ ընթացքում չորս հազար ընտիր տղամարդիկ պատրաստ էին Դաւիթ-բէգի մի խօսքի հետ կռիւ գնալ, որին ամէնքը սպասում էին անհամբեր...

Հեռու տեղերից աւելի ուրախ լուրեր էին հասնում. Զաւնդուրի ու Գուրհամի Թորոս ու Պապ քաջ հայ իշխանները սաստիկ ջարդ էին տուել իրանց գաւառի թուրքերին ու գրաւել բոլոր կրճեերը. նրանք գալիս էին Դաւիթ-բէգի հետ միանալու։

Հալիձորցի Տէր-Աւետիքը մի կողմ էր դրել խաչը, գցել ֆարաջան ու ձեռքին սուր, գլխին փափախ՝ կրակ էր տուել իր կողմի բոլոր թուրք գիւղերը. իր ծուխից կազմել էր մի գունդ ու շտապով գալիս էր Շէնհէր

Բայց թուրքերը գրաւել էին արդէն Շէնհէրի շրջակաները, իրանց բոլոր ուժը կենդրոնացրել այդ տեղերում. գիտէին, որ Շէն-

հերումն է Ղաբաբաղի յոյսը, Ղարաբաղի նեցուկը...

Երբ Դաւիթ-բէգը վերջնականապէս իմացաւ թշնամի զօրքերի թիւը, դիրքն ու միջոցները, յայտնեց իր գնդերին, որ հետեւեալ առաւօտ նրանց կռւի է տանելու։

Ամբողջ գիշերն անցաւ լուռ. ո՛չ մի ձայն չէր լսւում հայ զօրքերի մէջ,—ո՛չ աղմուկ, ո՛չ ծիծաղ...

Տաթեւի ծերունի եպիսկոպոսն օծեց հայկական դրօշակներն ու օրհնեց հայ զինւորներին...

Թ.

.... Ու հասաւ առաւօտը, արիւնալի կռւի առաւօտը։ Դեռ արեւը չէր ոսկեզօծել Ղարաբաղի գագաթները, դեռ առաւօտեան հովը չէր սօսափեցրել ծառերի տերեւները, դեռ երգիչ թռչունները չէին աւետել արշալուսի բացուելը՝ երբ հայ զինւորներն արդէն ոտքի վրա էին. հանդարտ, անձայն, կարգով նրանք գնդերի էին բաժանւում. իւրաքանչիւր գնդապետ իրան յանձնած գնդի առաջն էր անցնում։ Դաւիթ-բէգը դեռ չէր գուրս եկել. նրան ամենքը սպասում էին, ու ահա նա երեւեցաւ։ Հանդարտ վեհօրէն մօտենում էր զօրքերին։

Հայ զինւորները ցնծութեան աղաղակներով նրան ընդունեցին. նա նշան արեց, որ ուզում է խօսել և ահա տիրեց խորին լռութիւն.

«Ինձ աւելորդ է ձեզ բացատրել, սիրելի եղբայրներ, թէ ինչի համար այսօր կռւի ենք գնում. մենք փառքի համար չենք թողել մեր ընտանիքը, մեր կիսակործան տները... մենք գնում ենք նորից ձեռք բերելու այն ազատութիւնն ու անկախութիւնը, որը մեզնից խլել էին մեր թշնամիները. մենք գնում ենք վրէժխնդիր լինելու մեր յափշտակիչներից։ Մենք քիչ ենք, թշնամիները շատ են, բայց տառապեալների Աստուածը մեր կողմն է լինելու։ Դուք գիտէք, որ երբ մարդուց խլում են նրա ամենաթանկագին բանը, նրան յուսահատութեան են հասցնում ու նա վճռում է ձեռք բերել նորից իր կորցրածը, այն ժամանակ ո՛չ մի ուժ աշխարհիս վրա չի կարող նրան յաղթահարել...

«Այսօր մենք գնում ենք նորից ձեռք բերելու մեզանից խլուածը, գնում ենք փրկելու մեր եղբայրներին, մեր հայրենիքը,՝ մեր փառաւոր եկեղեցին... Եւ Աստուած մի արասցէ, որ դատապարտեն մեզ մեր սերունդները, թէ մենք անարժան կերպով կատարեցինք

մեր պարտականութիւնը... Աւելի լաւ է մենք բոլորս էլ մեռնենք, քան տեսնենք մեր թըշնամու յաղթութիւնը... Դէ, շուտով, եղբայրներ, շտապենք կուի դաշտը ու թող լուսաւորչի Աջը հովանի լինի մեզ վրա»...

Եւ սկսաւ կոտորածը . . . . . .

Այդ ամպերը չեն, որ որոտում են երկնքում, այդ կայծակները չեն, որ փայլատակում են ամպերում,— այդ սրերն են, որ շառաչում են, այդ կայծերն են, որ թափւում են սրերից...

Տնքում են լեռները, տնքում են հովիտները, դողում է երկիրն ու ցնծում են Արցախի ալևոր լեռները, որ նորից տեսնում են էրանց որդկերանց պատերազմը, լսում են հրացանների թնդիւնը, կուի աղաղակները... Ո՛վ տէր Աստուած, դո՛ւ օգնես մեզ։—

Արդէն արևը կանգնած է բարձր երկնքում, արդէն նա վաղուց նայում է կոտորածին, բայց ճակատամարտը դեռ շարունակւում է։

Առիւծների պէս կռւում են հայերը. թուրքերն յետ չեն քաշւում, գիտեն շները, որ եթէ յետ քաշուեն էլ չեն տեսնելու Ղարաբաղը...

Դաւիթ-բէգը հոգէհան հրեշտակի պէս յարձակւում է թուրքերի ամենախուռն շարքերի վրա. նրա դէմքը զարհուրելի է, նրա աչքերից կայծակներ են թափւում։

Նրա երկայն մազերը ծածանում էին օդում...

Փնտռում է նա գլխաւոր չարագործին, թուրքերի հրամանատար Զիվանշիր-բէգին, որն այնքան անմեղ զոհեր կորցրեց, որն այնքան հայկական արիւն թափեց...

Արդէն արևը թեքւում է դէպի արևմուտք, արդէն լեռների ստուերները սկսել են երկարանալ, արդէն շատ քաջեր ընկել են երկու կողմից, բայց պատերազմը դեռ շարունակւում է...

Կատաղած են մարդիկ, կատաղած են նժոյգները... Ընկածների տնքոցը, սրերի շառաչիւնը, հրացանների որոտը, ձիաների փնչոցը միանում էին, ու Ղարաբաղի լեռները նրանց խուլ արձագանգ էին տալիս...

Եւ ահա Դաւիթ-բէգը տեսաւ Զիվանշիր-բէգին.—

Ինչպէս արծիւն ամպերի միջից յարձակւում է իր որսի վրա, այնպէս Դաւիթ-բէգը յարձակուեց Զիւանշիր-բէգի վրա։

—Հէյ գեաուր-օղլի, գեաուր, սատակիր շան պէս, գոռաց Զիվանշիր-բէգը տեսնելով Դաւիթ-բէգին, իմ սուրը վաղուց սպասում է քեզ։

Ու նա էլ Դաւիթ-բէգի վրայ յարձակուեց.—Հանդիպեցան երկու հերոսներն ու սկսուեց մենամարտը...

Եւ գլորուեցաւ չարագործի գլուխը բազմատառապ երկրի վրա . . . . . .
. . . . . .

«Ալլահ, ալլահ», գոռացին թուրքերը, տեսնելով իրանց հրամանատարի մահն ու կատաղաբար շրջապատեցին Դաւիթ-բէգին...

Բայց չէ նիհրում նա—ինչպէս առիւծ պաշտպանւում է, ինչպէս հնձած խոտ գլորւում են նրա շուրջ անհաւատները:

Բայց տեսնում է Դաւիթ-բէգը, որ թուրքերը հետզհետէ շատանում են, որ նրա ուժը հետզհետէ թուլանում է ու վախը, վախը սուրբ դորձի համար մտնում է նրա սիրտը...

Բայց ահա՛ շփոթւում են թուրքերի շարքերը. նրանք անկարգ ցրւում են: Շուռ տուեց երեսը Դաւիթ-բէգն ու տեսնում է, որ դարանից շտապում է Մխիթարի թարմ գունդը.—

Այս գունդը սպասում էր պատերազմի վճռական ժամին—

Ինչպէս գժոխքի որդի, զարհուրելի՝ ինչպէս ինքը մահը, ինչպէս դև սլանում է Ազրայիլը կուի դաշտն ու նրա յետևից հինգհարիւր ձիաւոր. . . . . .

Եւ չ'դիմացան թուրքերն ու վայրենի ազաղակներով փախուստի դարձան . . . . .
. . . . . .

. . . . . .

Փողերի ձայներով, բացած դրօշակներով դառնում են կուից հայերն ամբոց և ուղղում Աստծուն ջերմ աղօթքներ յաղթանակի համար.
. . . . . .

ՎԵՐՋԱԲԱՆ

Անցաւ հինգ տարի: Արդէն ոչ մի թուրք չըկայ Ղարաբաղում, ոչ մէկը նրանցից իր պիղծ շնչով չէ կեղտոտում քրիստոնէական սուրբ հողը...

Հալիձորի ամրոցում առաւօտից հնչում են զանգակները: Բնակիչները տօնի հագուստներով դուրս թափուեցան փողոցներն ու հրապարակը...

Եկեղեցում հանդիսաւոր պատարագ կայ:

Բարձրանում են խնկի ու կնդրուկի հետ դէպի երկինք գոհութեան աղօթքներ հայրենիքի ազատուելու համար...

Պատարագը վերջացաւ: Դաւիթ-բէգը դուրս եկաւ եկեղեցուց:

Մօտեցաւ նրան պարսիկների Թահմազ-Շահի դեսպանը, չոգեց նրա առաջ ու կարդաց բարձր ձայնով Շահի հրովարտակը:

Հրովարտակում ասուած էր, որ Շահը հաստատում է Դաւիթ-բէգին Ղարաբաղի ու բո-

լոր նրա տիրած երկրների անկախ իշխան .

. . , ... , ...

Եւ խնդում է ժողովուրդն ու խօսում է իր իշխանի վրա, իսկ աշուղները տարածում են նրա գովքը աշխարհից աշխարհ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0321306

17.545